ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև միջուկային և ճառագայթային անվտանգության ոլորտում միջուկային վթարի վերաբերյալ օպերատիվ իրազեկման և տեղեկատվության փոխանակման մասին» համաձայնագրի ստորագրման նպատակահարմարության վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ռուսաստանի Դաշնության կառավարությունը կարևորում են ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման բնագավառում անվտանգության նպատակների առաջնահերթությունը և միտված են միջուկային և ճառագայթային անվտանգության բնագավառում միջազգային համագործակցության հետագա ամրապնդմանը:

Համաձայնագրի ստորագրումով նախատեսվում է սահմանել միջուկային և ճառագայթային անվտանգության վիճակի մասին տեղեկատվության փոխանակման և միջուկային վթարի վերաբերյալ օպերատիվ իրազեկման և տեղեկատվության փոխանակման պայմանները: Այն թույլ կտա ամրապնդել ՀՀ և ՌԴ իրավասու մարմինների միջև համագործակցությունը և կնպաստի միջուկային էներգետիկայի բնագավառի անվտանգության մակարդակի բարձրացմանը:

Սույն Համաձայնագրի ստորագրմամբ Հայաստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը կկատարեն 1986 թ. սեպտեմբերի 26-ի միջուկային վթարի վերաբերյալ օպերատիվ իրազեկման մասին Կոնվենցիայի 9-րդ հոդվածում նշված ԱԷՄԳ առաջարկները:

Առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի դրույթներով, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը նպատակահարմար է գտնում «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև միջուկային և ճառագայթային անվտանգության ոլորտում միջուկային վթարի վերաբերյալ օպերատիվ իրազեկման և տեղեկատվության փոխանակման մասին» Համաձայնագրի ստորագրումը՝ ղեկավարվելով երկու երկրների միջև գոյություն ունեցող բարեկամական հարաբերություններով և ատոմային էներգիայի խաղաղ օգտագործման բնագավառում համագործակցության հետագա ընդլայնման անհրաժեշտությունով, և հաշվի առնելով պատասխանատվությունն իրենց ժողովուրդների և միջազգային հանրության առջև ատոմային էներգետիկայի օբյեկտների անվտանգ շահագործման ապահովման համար:

ՀՀ էներգետիկայի և բնական
պաշարների նախարար Երվանդ Զախարյան